ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.09.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 30/15

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-30/15 բողոք) և կից փաստաթղթերը, ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, ՀՀ Տավուշի մարզպետարանի 26.08.2015թ. 01/11/4095-15 գրությունը և կից փաստաթղթերը, «Բարվա» ՍՊԸ-ի 21.08.2015թ. N Ն-2015/08/21_01 գրությունը և կից փաստաթղթերը, ԳԲԽ-30/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 31.08.2015թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 14.08.2015թ. ներկայացրած բողոքով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվող ծրագրերի հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային

ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն հայտով առաջարկել է գին՝ 38994300 ՀՀ դրամ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկված գինը եղել է՝ 42000000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.08.2015թ. կայացված նիստի թիվ 1 արձանագրության համաձայն՝ հաղթող է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն, չնայած նրան, որ վերջինիս կողմից առաջարկած գինն ավելի բարձր է եղել, քան «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի առաջարկած գինը, ինչպես նաև «Բարվա» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որ իր կողմից առաջարկվող ապրանքը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրի արտադրության ապրանք է:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն նշել է, որ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

Փաստ 1. Ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ հակակարկտային կայանի լիցքավորման համազարկերի քանակությունը պետք է լինի ոչ պակաս, քան 20000, այնինչ հաղթող ընկերության ներկայացրած առաջարկում (կայանի տեխնիկական պայմանում) այն եղել է 15000:

Փաստ 2. «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն առաջարկել է հայկական արտադրության հակակարկտային կայաններ՝ համաձայն «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների, չնայած նրան, որ հայտին կից չի ներկայացրել հայտարարություն, որ այն Եվրասիական տնտեսական միության անդամ պետության արտադրանք է: «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից հայտարարությունն արվել է բանավոր և հանձնաժողովը տեղյակ է եղել, որ վերջինիս կողմից առաջարկվող հակակարկտային կայանները հայկական արտադրության են:

Փաստ 3. «Բարվա» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել, չնայած նրան, որ առաջարկել է ավելի բարձր գին:

Փաստ 4. Հրավերի պայմանագրի նախագծում պատվիրատուի կողմից նշվել է կոնկրետ ապրանքի անվանումը՝ «..Զենիթ տիպի կամարաձև...»:

Փաստ 5. Հայտերի բացման նիստի ժամանակ, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկում ներառված փաստաթղթերի ցանկը հնչեցնելիս, չի նշվել այն հանգամանքը, որ «Բարվա» ՍՊԸ-ն ներկայացրել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության արտադրանք մատակարարելու մասին

հայտարարություն, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.08.2015թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 1 արձանագրությամբ նշվել է, որ «Բարվա» ՍՊԸ-ն ներկայացրել էր վերոհիշյալ հայտարարությունը: Հանձնաժողովի քարտուղարը հեռախոսային զրույցի ժամանակ հայտնել է, որ տվյալ հայտարարությունը հետագայում գտել են ծրարի մեջ (առկա է խոսակցության ձայնագրությունը):

Ըստ Ընկերության՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 07.08.2015թ. տեղի ունեցած նիստի N 1 արձանագրությամբ կայացվել է որոշում օրենքի խախտմամբ, քանի որ այն չի բխում օրենքի պահանջներից, մասնավորապես, խախտվել են Ընկերության ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ընկերությունը հայտնել է, որ հավասարության սկզբունքից ելնելով՝ ցանկացած անձ, ով հայտ է ներկայացնում պետական գնման գործընթացին մասնակցելու, Պատվիրատուի գործողություններից պետք է վստահ լինի, որ բոլոր մասնակիցները հավասար են և մրցույթում հաղթող կարող է ճանաչվել միայն այն մասնակիցը, ում հայտը բավարարում է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Ինչպես նշվել է **Փաստ 1-ում՝** գնման առարկայի բնութագրում նշվել է, որ հակակարկտային կայանի լիցքավորման համազարկերի քանակությունը պետք է լինի ոչ պակաս, քան 20000, այնինչ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական պայմանով առաջարկվել է համազարկերի քանակությունը 15000, որը հանձնաժողովը հաշվի չի առել և որպես Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն, որի կողմից առաջարկված ապրանքը չի համապատասխանել ձեռք բերվող ապրանքի նկարագրին և հատկանիշներին, ինչն էլ հակասում է Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Ըստ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի՝ առկա է նաև Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, համաձայն որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական պայմանները Պատվիրատուի կողմից պահանջվող ապրանքից էականորեն տարբեր է, քանի որ Հրավերով Պատվիրատուն պահանջել է, որպեսզի հակակարկտային կայանի լիցքավորման համազարկերի քանակությունը լինի ոչ պակաս, քան 20000, սակայն «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական պայմանները չեն բավարարել Պատվիրատուի պահանջներին (Փաստ 1):

Ընթացակարգի որպես հաղթող մասնակից է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ-ն, չնայած նրան, որ հայտով առաջարկել է «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ից ավելի բարձր գին:

Հանձնաժողովը «Բարվա» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու համար հիմք է ընդունել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի, եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն: Ընդ որում, գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպելու դեպքում գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը հաշվարկվում է ըստ չափաբաժինների:

Միաժամանակ, հանձնաժողովը որոշման մեջ նշել է, որ հաղթող ընկերությունը ներկայացրել է նաև հայտարարություն, որ իր կողմից մատակարարվող ապրանքը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության, ինչն էլ հիմք է հանդիսացել հաղթող ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին:

Ընկերությունը հայտնել է, որ ինչպես նշվել է **Փաստ 2-ում,** Ընկերության կողմից առաջարկված ապրանքն արտադրվում է Հայաստանի Հանրապետությունում՝

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից, որը նույնպես հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության երկրի ապրանք:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հայտնի է եղել, որ Ընկերության կողմից մատակարարվելիք ապրանքը հանդիսանում է հայկական արտադրության, չնայած նրան, որ տեխնիկական սխալի հետևանքով չի ներկայացվել հայտարարություն, բայց ներկայացվել է փաստաթուղթ, որը հավաստել է այն, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքն արտադրվում է իր իսկ կողմից, որն ավելի մատչելի է և որակով:

Հետևաբար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նման պայմաններում պետք է «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ին հաղթող ճանաչեր, քանի որ այն առավելությունը, որ «Բարվա» ՍՊԸ-ն առաջարկում է Եվրասիական տնտեսական միության երկրի արտադրության ապրանք, նույն առավելությունը փաստացի ունի նաև «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն, իսկ հայտարարություն չներկայացնելու պատճառով (որպես ձևական պահանջ) որպես Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, ինչը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի բուն էությունից:

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն նշել է, որ չնայած նրան, որ Ընկերությունը նույնպես առաջարկել է հայկական արտադրության (Եվրասիական տնտեսական միության երկրի արտադրության) ապրանք, սակայն չի ներկայացրել հայտարարություն, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պարտավոր էր պահանջել Ընկերությունից այդ հայտարարությունը, քանի որ վերջինիս կողմից ներկայացված տեխնիկական պայմանի համաձայն՝ տեղյակ է եղել, որ առաջարկվել է հայկական արտադրության ապրանք, որի դեպքում Կարգի 45-րդ կետի պահանջով առաջնորդվելով՝ հանձնաժողովը պետք է կասեցներ նիստը և Ընկերությունից պահանջեր հայտարարությունը՝ դիտարկելով այն որպես անհամապատասխանություն:

Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Պատվիրատուն, խախտելով Օրենքի վերը նշված պահանջը, Հրավերում նշել է գնվող ապրանքի կոնկրետ անվանումը և այլ հատկանիշներ, որն, ի դեպ, հենց հաղթող «Բարվա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքն է:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, Ընկերության կարծիքով Պատվիրատուն, արդեն իսկ կանխակալ վերաբերմունք է ունեցել, որն էլ ազդել է ընթացակարգի ելքի վրա:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներն՝ Ընկերությունը խնդրել է «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ-15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

2. <u>ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ Տավուշի մարզպետարանը 26.08.2015թ. 01/11/4095-15 գրությամբ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի գնահատող հանձնաժողովի 05.08.2015թ. թիվ 1 որոշմամբ հաստատվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ՝ համաձայն ՀՀ Կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվող հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով:

Համաձայն Հրավերի՝ հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 07.08.2015թ ժամը 14:00-ին ՀՀ Տավուշի մարզի ք. Իջևան, Սահմանադրության 1, հաշվապահության սենյակ հասցեում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի արդյունքում հաղթող է ճանաչվել «Բարվա» ՍՊԸ–ն՝ որպես Հրավերի պահանջներին բավարարող գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.08.2015թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 1 արձանագրության 1.7 կետի համաձայն՝ «Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից մատակարարվելիք գնման

առարկան հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

Համաձայն Կարգի վերոհիշյալ կետի՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող գնային առաջարկն ունի 15 տոկոս գնային առավելություն, և հայտերի գնահատման արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող գնային առաջարկը համարվել է Ընթացակարգի արդյունքում ներկայացված գնային առաջարկներից նվազագույն առաջարկը:

Պատվիրատուն «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի **Փաստ 1-ի** վերաբերյալ հայտնել է հետևյալը.

Հաղթող ընկերության՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից Հրավերով սահմանված կարգով ներկայացված հայտի տեխնիկական բնութագում լիցքավորման համազարկերի քանակությունը նշվել է «ոչ պակաս 20000»: Ինչ վերաբերում է նրան, որ կայանի տեխնիկական պայմաններում «Բարվա» ՍՊԸ-ն ներկայացրել է 15000 համազարկ, ապա «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է 12000 համազարկ:

Փաստ2. Հայաստանի Հանրապետությունը 2015թ. հունվարի 1-ից անդամագրվել է Եվրասիական տնտեսական միությանը, հետևաբար՝ հայկական արտադրության հակակարկտային կայանը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրի արտադրանք: Հրավերով սահմանվել է, որ նշված փաստի առկայության դեպքում պետք է ներկայացնել համապատասխան հայտարարություն (հավելված N4):

Մասնակիցներից միայն «Բարվա» ՍՊԸ-ն է հայտով ներկայացրել վերը նշված հայտարարությունը:

Փաստ 3. Մրցույթին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժին ներ	Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Գնի առաջարկը / ՀՀ դրամ /				Գնի առաջարկը / ՀՀ դրամ /			
			<<Լոկատոր>> ՓԲԸ				<<Բարվա>> ՍՊԸ			
	1	2	3				4			
			Արժեք (ՀՀ դրամ)	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գին	Արժեք (ՀՀ դրամ)	Շահույթ	ԱԱՀ	Պայմանագրի կատարման համար առաջարկված գին
1	*Հակակարկտային կայաններ*	հատ	29275000	3220250	6499050	38994300	32000000	3000000	7000000	42000000

Հաշվի առնելով Եվրասիական տնտեսական միության երկրի արտադրանք լինելու հայտարարության փաստը, գների համեմատության արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի գնային առաջարկը ստացել է 15 տոկոս գնային առավելություն՝ համաձայն Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության:

Պատվիրատուն նշել է, որ Եվրասիական տնտեսական միության երկրի արտադրանք լինելու հայտարարության փաստը հաշվի առնելով՝ մասնակիցների կողմից գնային առաջարկները համեմատվել են հետևյալ կերպ.

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ - 38 994 300 ՀՀ դրամ

«Բարվա» ՍՊԸ - 42 000 000 ՀՀ դրամ, 15 տոկոս գնային առավելությունը՝ **35700000** ՀՀ դրամ:

Փաստ 4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.08.2015թ. թիվ 1 որոշմամբ հաստատվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերը, ներառյալ Պայմանագրի ձևը՝ հաշվի առնելով հակակարկտային կայանի կարևորությունը, որը բնութագրվել է ամբողջությամբ, բոլոր պարամետրերով: Այդ պատճառով պայմանագրի նախագծում գրվել է կոնկրետ ապրանքի անվանումը:

Փաստ 5. Հայտերի բացման նիստի ժամանակ հնչեցվել են 2 մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերի ցանկը, ներառյալ նաև «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարությունը: Նիստին մասնակցած «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներին տեղեկացվել է, որ Հրավերով և օրենքով սահմանված կարգով կտրամադրվի նիստի արձանագրությունը:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգն անցկացվել է Հրավերով սահմանված չափանիշները գնահատելով և գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը վերլուծել և գնահատել է հայտեր ներկայացրած 2 մասնակիցների փաստացի գրավոր ներկայացրած փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների մոտ անհրաժեշտություն չի առաջացել մասնակիցներից լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու: Պատվիրատուն «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը համարել է անհիմն և խնդրել է թույլատրել շարունակելու ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից հայտարարված «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը՝ համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի:

3. «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բարվա» ՍՊԸ-ն 21.08.2015թ. N Ն-2015/08/21_01 գրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքի **Փաստ 1-ի** վերաբերյալ հայտնել է, որ «Բարվա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացրել է տեխնիկական պայմաններ, համաձայն որի կայաններն ապահովում են ընդհանուր քանակով ոչ պակաս 15000 կրակոցներ: Մինչդեռ, Ընկերությունը պնդել է, որ «Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած առաջարկում եղել է 15000:

«Բարվա» ՍՊԸ-ն նշել է նաև, որ Հրավերի 3.3 կետի «ը» ենթակետի համաձայն, հայտով ներկայացրել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, որտեղ հստակ նշվել է, որ «Բարվա» ՍՊԸ-ն կարող է ապահովել ոչ պակաս 20000 կրակոց, 20կգ-ոց, առնվազն 6 գլանանոթներով՝ կից ներկայացնելով «Բարվա» ՍՊԸ-ին պատկանող ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից 26 հունվարի 2015թ. տրված N 389 արտոնագրի պատճենը, առ այն, որ «Զենիթ» կայանների վրա փորձարկումների արդյունքներով, առաջարկված նորարարության շնորհիվ,

կրակոցների թիվը կազմում է 20000-24000 (մեկ կրակոցի համար ծախսվող գազի քանակը՝ 5-6 գ.):

«Բարվա» ՍՊԸ-ն բողոքի **Փաստ 2-ի** վերաբերյալ հայտնել է, որ բանավոր հայտարարությունը չէր կարող հիմք հանդիսանալ, որպեսզի հանձնաժողովը հայտով նախատեսված փաստաթղթի ներկայացման պահանջը համարեր բավարարված, քանի որ համաձայն հայտի ներկայացման կարգի՝ հայտերը ներկայացվում են մինչև դրա համար հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Բացի այդ, Հրավերի՝

- 5.2.1 կետի համաձայն՝ եթե հանձնաժողովի անդամը և (կամ) մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:
- 5.2.3 կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկությունները էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Բարվա» ՍՊԸ-ն բողոքի **Փաստ 3-ի, Փաստ 4-ի և Փաստ 5-ի** վերաբերյալ հայտնել է, որ Ընկերությունը բառախաղերի, մանիպուլյացիաների ու անօրինականությունների միջոցով փորձել է ամեն կերպ խոչընդոտել «Բարվա» ՍՊԸ-ին իրականացնելու Պատվիրատուի հանդեպ ստանձնած պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից՝ «Բարվա» ՍՊԸ-ն խնդրել է, հնարավորինս սեղմ ժամկետում կայացնել որոշում այդ կապակցությամբ, որպեսզի կարողանա իրականացնել ՀՀ կառավարության 2015թ. հուլիսի 2-ի N 766-Ն որոշմամբ, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության 2015թ. պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցներով, ՀՀ Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցներով հակակարկտային կայաններ մատակարարելու իրենց պարտավորությունները:

4.ԳԲԽ-30/15 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 31.08.2015թ. եզրակացությունը և առաջարկել է «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը հայտարարել ապօրինի:

5.ԳԲԽ-30/15 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-30/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

2. «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) առաջին մասի «Գնման առարկայի բնութագիրը» բաժնում Հրավերով նախատեսված ապրանքների համար ***պահանջվել է ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների առկայությունը***: Ընդ որում, ըստ նույն մասի «Հայտը ներկայացնելու կարգը» բաժնի՝ այն պետք է ներկայացվի մասնակցի հայտով:

3. Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, «Հակակարկտային կայան» գնման առարկայի համար սահմանվել է՝ պաշտպանող ծածկույթը ոչ պակաս 100 հա, ***լիցքավորման համազարկերի քանակությունը ոչ պակաս 20000***, լիցքավորման համար անհրաժեշտ գլանանոթների թիվը ոչ պակաս 6՝ յուրաքանչյուրը 20կգ տարողությամբ, էլեկտրասնուցումն ավտոնոմ՝ արևային մարտկոցի միջոցով, հեռակառավարումը բջջային հեռախոսացանցի և կենտրոնացված համակարգչային

համակարգի միջոցով: Սեփական միջոցների հաշվին ապահովել հակակարկտային կայանների տեղադրման վայրում, ինչպես նաև տեղադրման վայրի պատշաճ կերպով նախապատրաստումը:

4. Հրավերին կից N 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի 1.1 կետով, նշվել է, որ վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված 10 (տասը) միավոր ***Զենիթ տիպի*** կամարաձև մետաղական շինությամբ հակակարկտային ակուստիկական հեռակառավարվող կայանների պատրաստումը և տեղադրումը Պատվիրատուի կողմից նշված համայնքների տարածքում՝ համաձայն ՀՀ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված ***«ՏՊ ԱՄ 391536137445-2014» տեխնիկական պայմաններով*** սահմանված նորմերի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

5. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բարվա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, «Հակակարկտային կայան» գնման առարկայի բնութագիրը նշվել է՝ պաշտպանող ծածկույթը ոչ պակաս 100 հա, ***լիցքավորման համազարկերի քանակությունը ոչ պակաս 20000***...:

6. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Հրավերով պահանջվող «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի 21.10.2014թ. հաշվառված N 12357 «Զենիթ-Տուրբո» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանները (ՏՊ ԱՄ 39153613.7445-2014), որի աղյուսակ 1-ի «պարամետրի և բնութագրի անվանումը» սյունակում նշվել է՝ ***կրակոցների ընդհանուր քանակը ոչ պակաս***, իսկ «արժեքը և նորմը» սյունակում նշվել է ***15000 հատ***:

7. «Բարվա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած N 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել 42000000 ՀՀ դրամով:

8. «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած N 4 հավելվածով՝ գնային առաջարկով սահմանել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել 38994300 ՀՀ դրամով:

9. «Բարվա» ՍՊԸ-ն հայտի հավելված N 4.2-ով՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ իր կողմից հայտով առաջարկվող 1-ին չափաբաժնում նշված ապրանքը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք: Ընդ որում, ընտրված մասնակից ճանաչվելու և պայմանագիր կնքվելու դեպքում ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման ժամանակ Պատվիրատուին պետք է ներկայացվի նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 07.08.2015թ. ժամը 14:00-ին տեղի ունեցած նիստի N 1 արձանագրության՝

- 1.7 կետով արձանագրել է, որ «Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ իր կողմից մատակարարվելիք գնման առարկան հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք:

Համաձայն Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության՝ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող գնային առաջարկն ունի 15 տոկոս գնային առավելություն և հայտերի գնահատման արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացվող գնային առաջարկը համարվում է Ընթացակարգի արդյունքում ներկայացված առաջարկներից նվազագույն առաջարկը:

- 1.8 կետով որոշել է Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի:

11. «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կնքված պայմանագրի մասին հայտարարության համաձայն՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև 13.08.2015թ. կնքվել է հակակարկտային կայանների ձեռքբերման պայմանագիր:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերով սահմանվում են «գնման առարկա» և «գնման առարկայի բնութագիր» հասկացությունները, մասնավորապես այդ կետերի համաձայն՝ գնման առարկան հանդիսանում է գնվող ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը, իսկ գնման առարկայի բնութագիրը կազմում է գնման առարկայի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: ***Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:***

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը***, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի համաձայն՝ **տեխնիկական պայմանները** տեխնիկական պահանջները սահմանող փաստաթուղթ է, որին պետք է համապատասխանեն որոշակի արտադրանքը, աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը), ծառայությունը:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև համապատասխան ազգային ստանդարտների ընդունումը կազմակերպությունների տեխնիկական

պայմանները ենթակա են փորձաքննության և հաշվառման Ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն գործող ստանդարտացման կանոնների և ուղեցույցների:

ՀՀ կառավարության 2011թ փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «է» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում, եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, ապա ***մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ:***

Նույն կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե գնման հայտով ներկայացված տվյալ գնման առարկայի պահանջվող քանակի և առավելագույն գնի արտադրյալը չի գերազանցում գնումների բազային միավորի 70-ապատիկը, ապա այդ գնման առարկաների գծով գնային առաջարկների գնահատման և համեմատման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ առաջարկող մասնակիցներն ունեն մինչև 15 տոկոս գնային առավելություն:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես ***նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում ***հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում*** հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ***շտկել անհամապատասխանությունը***:

1. Ինչպես նշվել է, Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ հակակարկտային կայանի լիցքավորման համազարկերի քանակությունը լինի **ոչ պակաս, քան 20000**:

Չնայած այն հանգամանքին, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բարվա» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, սահմանվել է գնման առարկայի բնութագիրը՝ «Հակակարկտային կայան, պաշտպանող ծածկույթը ոչ պակաս 100 հա, լիցքավորման համազարկերի քանակությունը **ոչ պակաս 20000**, սակայն «Բարվա» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է Հրավերով պահանջվող «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից 21.10.2014թ. հաշվառված «Զենիթ-Տուրբո» հակակարկտային համակարգի տեխնիկական պայմանները (ՏՊ ԱՄ 39153613 7445-2014), որտեղ «Զենիթ-Տուրբո» հակակարկտային համակարգի կրակոցների ընդհանուր քանակը սահմանված է **15000 հատից ոչ պակաս:**

Նման պայմաններում, նախ, Պատվիրատուն պետք է ղեկավարվեր Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցեր առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Մինչդեռ Ընթացակարգի Հրավերով պահանջվել է, որ որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, այդ թվում նաև ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանները, ներկայացվեն մասնակցի կողմից հայտով:

Այնուհետև, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տվյալ դեպքում ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների) գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելով (Հրավերի համաձայն՝ ոչ պակաս քան 20000 կրակոց, իսկ ՀՀ Ստանդարտների Ազգային Ինստիտուտի կողմից հաստատված տեխնիկական պայմանների համաձայն՝ ոչ պակաս, քան 15000 կրակոց)՝ Պատվիրատուն պետք է ղեկավարվեր Կարգի 51-րդ կետի պահանջներով և նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցեր «Բարվա» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արդյունքում «Բարվա» ՍՊԸ-ի հայտը չի համապատասխանել Հրավերով նախատեսված պայմաններին և Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի կողմից այն պետք է գնահատվեր անբավարար և մերժվեր:

Ուստի տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասի» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի և 51-րդ կետերի պահանջները:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից վերոհիշյալ անհամապատասխանության վերաբերյալ հայտնած դիրքորոշմանը, ըստ որի «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն հայտով ներկայացրել է 12000 համազարկ, ապա հայտնում ենք, որ վերոհիշյալ փաստարկը չի առնչվում «Բարվա» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելուն:

2. Ինչպես նշվել է, Կարգի 35-րդ կետի 1-ին կետի «է» պարբերության համաձայն՝ ապրանքների գնման դեպքում, եթե առաջարկվում է մատակարարել Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, ապա մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն դրա վերաբերյալ:

Բարվա» ՍՊԸ-ն, Կարգի 35-րդ կետի 1-ին կետի «է» պարբերության համաձայն, հայտով ներկայացրել է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ հայտարարություն (Հավելված N 4.2-ը), որով հայտնել և հավաստել է, որ իր կողմից հայտով առաջարկվող ապրանքը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, մինչդեռ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի կողմից հայտով նման հավելված չի ներկայացվել:

«Բարվա» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել 42000000 ՀՀ դրամով, իսկ «ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ն հայտի գնային առաջարկով առաջարկել է պայմանագիրը կատարել 38994300 ՀՀ դրամով, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից հայտով առաջարկվող ապրանքը հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք, ուստի, ըստ Կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության, «Բարվա» ՍՊԸ-ն ունի մինչև 15 տոկոս գնային առավելություն, որը կազմում է **35700000** ՀՀ դրամ, ինչի արդյունքում Պատվիրատուն Ընթացակարգի հաղթող մասնակից է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին:

Խորհուրդը գտնում է, որ տվյալ դեպքում Պատվիրատուն պահպանել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

3. Հրավերին կից N 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի 1.1 կետով նշվել է, որ վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված 10 (տասը) միավոր ***Զենիթ տիպի*** կամարաձև մետաղական շինությամբ հակակարկտային ակուստիկական հեռակառավարվող կայանների պատրաստումը և տեղադրումը Պատվիրատուի կողմից նշված համայնքների տարածքում՝ համաձայն ՀՀ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված ***«ՏՊ ԱՄ 391536137445-2014» տեխնիկական պայմաններով*** սահմանված նորմերի:

Մինչդեռ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրում ընդգրկվում են գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը:

Այսպիսով, Հրավերին կից պայմանագրի նախագիծը պետք է արտացոլեր նույն Հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջները, մինչդեռ պայմանագրի նախագծում վկայակոչվելով Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը, Պատվիրատուն միաժամանակ նշել է նաև ապրանքի ֆիրմային անվանումը, այն է «Զենիթ տիպի կայան»: Պատվիրատուն նույն պայմանագրի նախագծում նաև ամրագրել է, որ այդ ապրանքը պետք է համապատասխանի ՀՀ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից հաստատված ***«ՏՊ ԱՄ 391536137445-2014» տեխնիկական պայմաններով*** սահմանված նորմերին:

Նման պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն մասնակի խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրա-տուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ-ի 14.08.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի կողմից հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀՏՄ-ԲԸԱՀԱՊՁԲ 15/1» ծածկագրով բանակցային ընթացակարգի առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնման ընթացակարգը հայտարարել ապօրինի:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ոսկանյան Լուսինե**

Անդամներ՝ **Զոբանյան Ռոման**

Պողոսյան Լիդիա